ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի Փոքր Սարիարի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչի թափուր տեղի համար:

Պատմության ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է 2 փուլով՝ գրավոր և բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է :

Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հաստատող ավարտական փաստաթուղթ դիպլոմ, կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից:

Անձնագրի պատճենը:

Ինքնակենսագրություն:

Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարում հավաստող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):

Մեկ լուսանկար՝ 3X4չափի:

Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրպետությունում աշխատելու իրավունք:

ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացվեն բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետ սահմանվում է 2018 թվականի Հոկտեմբերի 3-ը ներառյալ,բացի շաբաթ և կիրակի օրերից,ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}:

Մրցույթն անցկացվելու է 2018 թվականի Հոկտեմբերի 5-ին ժամը $\mathbf{12^{00}}$-ին , Փոքր Սարիարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝Շիրակի մարզ, գյուղ Փոքր Սարիար:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել(093) 62-67-71 ,(094)626771 հեռախոսահամարներով: